

Ճշմարտությունն ու արդարությունը դատարկ
հնչյուններ են զբանջ համար։
Այժմ դառնանք երկու ուրիշ հոտանքների
որ արտայայտվում են գերմանացի ռավակա-
րականների և միսիսիսների գործունեությունը։
(Կը չարունակվի)

3) K. Kärger: „Kleinasien ein deutsches Kolo-

⁵⁾ Dr. P. Rohrbach: „Die Bagdadbahn“.

գինեւորական հիւանդանոցը բժշկվելու հարե-
րախաշար երեւոյց, որ այդ օֆիցէրները վեր-
բերելու համար պարտաւորութեամբ կանգնե-
նային տեղում գտնուող ռուսականներին մի խումբ
կողակեցիներ օգնութեամբ մի քանի րօպէտով
ցրվեց ցոյց անողներին: Ասորձանակ արձակողը,
չը նայելով իր համախոհներին փորձերին ազա-
տելու նրան ռուսականներին ձեռքից՝ ձեռքա-
կալվեց անկարգութեան միւս նախաձեռնող-
ներին հետ միասին Չերքասկայի ցոյց անող-
ներին քննարկելով թիւը 24 հոգի, անկախ այն
պատասխանատուութիւնից, որին պէտք է եւ-
թարկվեն նրանցից մի քանիսը հասցրած վեր-
քերի պատճառով, կողմաստան կառավարչա-
պետի հրատարակած պարտադիր կանոններին
հիման վրայ, հասարակական կարգը խանգարե-
լու նպատակով ժողովներ կազմելու և ռուս-
կանութեան պահանջը չը կատարելու համար,
ենթարկված են, թիֆլիսի նահանգապետի կար-
գադրութեամբ, իրանց յանցանքի աստիճանին
համեմատ, բանտարկութեան, սկսած մի շարա-
թից մինչև 3 ամիս: Ոստիկանութեան պաշտո-
նականները, նոյնպէս և ցոյց անողներին ոչ ոք
լուրջ վնասներ չը ստացաւ:

Ստացանք տիկին Չարուհի Սաղաթէրեանից
3 րուբլի և 50 ֆիւրսով օգտին և 2 րուբլի
ուսուցչի Դաւթեանի ընտանիքի օգտին:

Մեզ խնդրում են հաղորդել, որ վաղը, ուր-
բաթ, փետրվարի 27-ին, տեղի կունենայ Կով-
կասեան Գիւղատնտեսական ընկերութեան հեր-
թալան նիստը, որի պարագայումները կը լի-
նեն 1) բնթացիկ գործեր, 2) ընկերութեան
նախաճաշուի ըննութիւնը, 3) խմբագրական
յանձնաժողովի ընտրութիւնը, 4) Ա. Քարան-
թարի գեկուցումը գիւղատնտեսական ընկե-
րութիւնների միացման մասին և 5) Գոգիա-
լիւու գեկուցման ըննութիւնը: Սկիզբը 8 ժա-
մին: Նիստին կարող են մասնակցել և կողմ-
նակի անձինք:

Օպերային խումբը, թիֆլիսի արտիստական
թատրոնում երեքշաբթի, փետրվարի 25-ին,
ներկայացրեց Չայկովսկու «Пиковая Дама»
օպերան, որտեղ Գերմանի դերը կատարեց Բո-
րիսենկոն: Հասարակութիւնը ընդունեց նրան
ծափահարութիւններով: Երգիչը ստացաւ եր-
կու փուռը: Թատրոնը կիսով չափ լիքն էր:

Կովկասեան կառավարչապետի օգնական գե-
ներալ Յրեզէ մերժեց «Тяф. Листок» լրագրի
խմբագիր Քրիստաֆոր Ուալտտրովի խնդիրը՝
թոյլ տալ երկուշաբթի օրերն ևս հրատարա-
կելու լրագիրը միւս օրերի ծրագրով՝ այժմ
հրատարակվող հեռագրիներին և յայտարարու-
թիւններին փոխարէն:

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլի-
ցին, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից
«Кавказ» լրագրին, համաձայնութիւն չէ յայ-
տնել երկարացնելու: Ուրեքն Յովհաննիսեանի
ժալանակալութիւնը խմբագրութեան ժամանակա-
միջոցը «Аргонавты» շաբաթաթերթի վերա-
բերմամբ: Կառավարչապետ իշխան Գոլիցին
արեւել չը գտաւ «Երկաթ» ամսագրի ժամանա-
կալութիւնը խմբագիր հաստատելու Ալեքսեյ-
իսկից:

Թեւեթի մեզ գրում են, «Այստեղի քաղա-
քային ուսումնարանում ներկայ ուսումնական
տարւոյ պարգիւ հայոց լեզուի և կրօնի դասե-
րը չեն աւանդվում: Պատճառը մի արժանաւոր
քահանայ չունենալն է: Վաղըց խնդիր ենք
ուղարկել կոնսիստորին, որ գտնէ ներսիսեան
դպրոցը աւարտած մի քահանայ ուղարկեն
Սարգիս քահանայ Տէր-Սարգսեանի տեղը, որ
ծերութեան պատճառով այլ ևս անկարող է իր
պաշտօնը կատարելու: Բայց ինչպէս երևում է՝
մեր այս խնդիրը դեռ ևս ընտան գրութեան
մէջն է գտնվում:

ՎԱՇԼԵՎԱՆ գիւղից (թիֆլիսի գաւառ) մեզ
գրում են, «Մեր գիւղի կառուածատէր իշխան
Մամուկ Օրբելեանին, իր անուանի իշխանուհի
Երզնկայեան Էրզնկայեան և գաւառատէր պ.
Էրզնկայեան Գուգուսայիլին, տեսնելով գիւղա-
ցիներին դանդաղ գրութիւնը վաշխառուների ճի-
րաններով՝ ետանդով աշխատում են վերջ
գնել այդ արիւնքաւոր գաղանկների արդաւն-
ներին: Այս առիթով վերոյիշեալները առաջի-
կայ մեծ պատիւ տալու են թիֆլիսի Արախ-
տական թատրոնում մի ներկայացում: Այս
ներկայացման զուտ գումարով պիտի բացեն
Վաշլեւան, Կոզա, Կուսիս և Սալի թիւերը գիւ-
ղերում գիւղական գանձարան: Որովայն է, որ

իւրաքանչիւր գիւղին տրվի 500 րուբլի դրա-
մագում և իւրաքանչիւր գիւղացի (պէտք
ունենցող) կը ստանայ գանձարանից ամենաշա-
ւար 60 րուբլի 30/00-ով (շատ չքաւորներից 0/0
չը պիտի վերցվի): Գիւղացիները ուրախու-
թեան չափ չը կայ, միայն չքաւորները երկիւղ
էլ ուժեղները օգտվեն և թոյլերը կրկին և կրկին
զրկվեն Ի սրտէ ցանկանում ենք աշխուժեալ
Թող օրինակ վերցնեն արանից մեր հայ,
վրացի, ռուս և թուրք իշխանները, տիկիները
և գաւառապետները:

ՂԱՐԱՍՈՒԹԱՋԱՐԻՑ մեզ գրում են, «Փե-
տրվարի 13-ին Վարդանանց տօնի առիթով
տեղին հայոց ծխական դպրոցում կայացաւ
աշակերտական հանդէս և ներկայացում: Ու-
սուցչի Թ. Օրդուեանց խօսեց Վարդանանց
գործունէութեան մասին, աշակերտներն ու
աշակերտուհիները երգեցին և ուսանողները
պարտաւորեցին հայերէն և ռուսերէն, յետոյ
խաղաղին Վերթութիւնը խաթալ չէ՝ և «Հա-
վարան» հնգ. Ն. Դադարեանցի: Ուղարկաւ էր
օր. Դ. Թոփալեանի իր կենդանի խաղովը, որի
համար կրկնակի ծափահարութեան արժանա-
ցու է վերջոյ աշակերտներին բաժանեցին
քաղցրեղէններ, որոնց ծախսը իր վրայ առած
էր հոգաբարձու պ. Գ. Եղաճեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՂԱՅԻ ԵՐԿԱՌՈՒՄ

«Новое Время» լրագրի տաղանդոտ յո-
ղուածում կարգում ենք.

Սուլթանի իրադէտով հաստատված է համա-
ձայնութիւն թիւրքաց կառավարութեան և Ա-
նատոլիական երկաթուղու ընկերութեան միջև
Բաղդադի երկաթուղու առաջին մասի կառուե-
ման վերաբերմամբ: Ի դերս ելան, ինչպէս և
պէտք էր սպասել, այն յոյսերը, թէ Թիւրքիան
միջոցներ չի գտնի վճարելու քիւմսեթական
երաշխաւորութիւնը և որ այդ բանի չորհրդ
Բաղդադի երկաթուղու կառուցումը երբէք չի
սկսվի: Սրանից յետոյ այլ ևս անկասկած է, որ
կիրառորդի Բաղդադի երկաթուղու նախագի-
ծը Առանց պետական պարտքի միացման և
տաւանց առեւտրական զանազանների վերաբնու-
թեան էլ Թիւրքիան գտաւ եկամուտների յո-
ղուածներ, որոնցով հնարաւոր եղաւ ապահո-
վել երաշխաւորութեան կանոնաւոր վճարումը
Բաղդադի երկաթուղու առաջին կտորի համար:
Մի քանի ժամանակից յետոյ միջոցներ կը
գտնվեն երկաթուղական գծի հետեւեալ մասե-
րի եկամուտները երաշխաւորելու համար ևս
մինչև Բաղդադ է մինչև Պարսից ծոցը:

Շատ հաւանական է, որ Բաղդադի երկա-
թուղու նախագծի իրագործման հերքողները
այժմ էլ կը սկսեն ասել, որ գերմանացիներին
չի աշողվի գործը մինչև վերջը հասցնել, որ ե-
թէ Թիւրքաց կառավարութիւնը ապստովեց
նախագիծը երկաթուղու առաջին մասի ե-
րաշխաւորութեան վճարումը՝ դրանից արդէն
չէ կարելի եղողական, որ նրան կաշողվի
վճարել քիւմսեթական երաշխաւորութիւն
Բաղդադի երկաթուղու աւերով տարածու-
թեան համար և այլու Սակայն մենք թոյլ կը
տանք մեզ կորակնապէս կասկածելու և ա-
սելու, թէ որքն հիմք չունեն այդ տեսակ
պնդումները: Արդէն ներկայումս Հայդար-Փա-
շա-Անգորա գծի եկամուտը հասել է մինչև
թիւրքաց կառավարութեան երաշխաւորած
թուանչանը և այդ պատճառով այդ գծի համար
որքն լրացուցիչ վճար չէ պահանջվում: Ա-
նատոլիական երկաթուղու ընկերութիւնը դեռ
ևս չէ հրաժարվել երաշխաւորութեան վրայ իր
ունեցած իրաւունքներից, բայց, եթէ կը պա-
հանջվի՝ նա, ի հարկէ, կը համաձայնվի, որ
այդ երաշխաւորութեան վճարը ապահովող
թիւրքաց պետական եկամուտների յոգուած-
ները գործարարին Բաղդադի գծի մնացած մա-
սերի երաշխաւորութեան վճարման վրայ եր-
կաթուղին Ղոնիայից մինչև Ալեքսանդրէտեան
ծոցը հասնելուց յետոյ Սակիէէրից մինչև զո-
նիս ճիւղի եկամուտը միանշաղկի կաճի, և
հաւանական է, որ նրա համար էլ առանձին
լրացուցիչ վճարներ չեն պահանջվի թիւրքաց
կառավարութեան կողմից, որը այդպիսով ա-
զատ գումարներ կունենայ, առանց ծանրա-
բեռնելու պետական բիւջէտը, վճարելու
Բաղդադի երկաթուղու քիւմսեթական երաշ-
խաւորութիւնը:

Չէ կարելի ուղարկութեան չառնել Ասիական
Թիւրքիայի և այն չրջանների եկամուտների
մեծանալը, որոնցով աստիճանաբար կանցնեն

երկաթուղական գծերը: Անկասկած կանեն
այդ չրջաններից հաւաքող տասնամորական
հարկի թէ չափը և թէ գինը, որի պատճառով
Թիւրքիայի տրամադրութեան տակ կը մնան
էլի նոր գումարներ:

Նյդպիսի պայմաններում օրօրի իրան այն
յոյսերով, թէ Թիւրքաց կառավարութիւնը ան-
գոր է և այդ հանգամանքը պէտք է անյաղթելի
լինի Բաղդադի երկաթուղու նախագծի իրա-
գործման ոչ միայն անհիմն է, այլ և վերին
աստիճանի վնասակար: Աւելի օգտաւէտ է եւ-
թաղի մեր չաների համար ամենապատե-
կալն է, որ Բաղդադի երկաթուղու կառուութիւնը,
պաշտօնապէս սկսվելով այս պահանքը, կա-
ւարտի կհայէնայով պայմանաւորված 8-ա-
միայ ժամանակամիջոցում, այսինքն 1911 թուի
գարնանը:

Այդ պատճառով մեր բոլոր հաշիւները պէտք
է անել այն ենթադրութեամբ, որ 1911 թւին,
շատ կարելի է և աւելի վաղ, Գերմանիան տէր
կը հանգիստանայ Բաղդադի մինչև Պարսից ծոցը
գնացող երկաթուղական անընդհատ գծի Եւ-
րօպական Թիւրքիայի երկաթուղիների գլխա-
ւոր ցանցը, «Deutsche Bank»-ի ճարպիկ գոր-
ծողութիւնների չորհրդով, արդէն անցնում է
գերմանացիների ձեռքը: Ուրեք տարւոյ ըն-
թացքում գերմանացիներին երկի կաշողվի
ձեռք բերել և բոլոր մնացած գծերը, որոնք
կապում են Գերմանիան Թիւրքիայի հետ, և
այն ժամանակ աւերով տարածութեան վրայ,
Համբուրգից մինչև Պարսից ծոցը, գերմանական
ապրանքները կը տարվեն գերմանական եր-
կաթուղիներով: Դա կը լինի Գերմանիայի խա-
ղաղ մեծ նուաճումը, որը կը տալ նրան առատ
պտուղներ թէ անասական և թէ քաղաքական
տեսակետով:

Տարօրինակ զուգահեռութեամբ Բաղդադի
երկաթուղու կառուութիւնը վերջնականապէս
հաստատող սուլթանական իրադէի հրատարա-
կումը կայացաւ փետրվարի 17-ին, այսինքն
մեր տօմարով երկու օր առաջ, իսկ նոր տօ-
մարով՝ Մոսկով-Ստեֆանօֆ լրագրից ստորագրե-
ման 25-ամեայ յօդուանի նախընթաց օրը:
Ընդ առնել 25 տարուց յետոյ այն օրից, երբ
Կ. Պոլսի պատերի մօտ մենք թիւրքում էինք
մեր գործով շարժած թշնամուն խաղաղու-
թեան պայմանները՝ մենք ստիպվեցանք տես-
նել Բաղդադի ափերի վրայ այն պետու-
թեան յաղթութիւնը, որը երբէք ոչինչ չը
զոհնելով Բալկանեան թերակղզու վրայ, կարո-
ղացաւ խաղաղ ճանապարհով պատմական նշա-
նակութիւն ունեցող յաղթութիւն տանել:

Քանի և հինգ տարի առաջ մենք Բերլինում
կորցրինք այն, ինչ որ նուաճեցինք մեր արեւ-
նոյս Այժմ Բերլինը եկաւ Կ. Պոլս, որպէսզի
խլէ և այն վերջին բանը, ինչի վրայ որ մենք
իրաւունք ունէինք...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սօֆիայի լրագիրների առելով Մակեդո-
նիայի և Ադրիանօպոլի վիլայէթի բնակիչնե-
րը ուղարկեցին Ֆրանսիական արտաքին գոր-
ծերի մինիստր Դէկլաւեին հետեւել հեռագրերը:
«Պատմութիւններից համադրած ինքնով, որ Թիւր-
քիան երբէք չի մտնի լուրջ ընթացքով Մա-
կեդոնիայում, եթէ միայն այդ ընթացքները չը
մտնեցին մեծ պետութիւնների աշխուրջ հեղ-
կութեան տակ, դուք, պ. մինիստր, հանդէս
բերեց նորից Ֆրանսիայի մարդասիրական մեծ
տարգիծանքները: Յուշապիտ այն բանի վրայ, որ
մօտ ապագայում տեղի ունենալից անցնելու
առիթ կը տան աւելի ևս եռանդուն կերպով
միջամտութիւն գործելու մակեդոնացիների
օգտին, մենք Սօֆիայում հաւաքված մակեդո-
նացի զաղթականների ներկայացուցիչներն,
վստահութեամբ սպասում ենք Ֆրանսիայի մե-
ծանոցի քաղաքականութեան հետեւեալին և
յայտնում ենք ձեզ զաղթականների անուշից
մեր երաշխաւորութեան խորին զգացմունքը:

—«Temps» լրագրի Սօֆիայի թղթակիցը
հաղորդում է, թէ բոլջարական յեղափոխական
կենտրոնական վարչութիւնը մի չրջաբերական
է ուղարկել մակեդոնական ազգայնականութեան,
որով խորհուրդ է տալիս անխտիր առնել ազ-
գութեան պատկանող անասաններին շնորհունը
այն պայմաններից և ոչ մէկը, որոնք կարող
էին տույնարկվել քրիստոնեաներին՝ ժամադր-
մերիայի կամ ռուսիկանութեան մէջ ընթացի-
մեր մտնելու ժամանակ:

—«New-York-Herald» լրագրի Բերլինի թղթ-
ակիցը ուղարկութիւն է դարձնում այն նշա-
նաւոր հանգամանքի վրայ, որ գերմանական
կայսր Վիլհելմ II-ի և Թիւրքական սուլթանի
մէջ ներկայ լուրջ զոյգութիւն ունեն ամե-
նապարտապէս յարաբերութիւններ: Վիլհելմ բա-
րեկամութիւնը սուլթանին հետ և սրտագին
անփոփոխ յարաբերութիւնները երկու վեհա-
պետների մէջ, առում է թղթակիցը, պարզա-
պէս երևում է նրանից, որ գերմանական թա-
գաժառանգն և պրինց Յիլդըրի, որոնք կարճ
ժամանակից յետոյ պէտք է ուղարկվեն զէպի

արեւել ճանապարհորդելու՝ կայսրի ցանկու-
թեամբ կայցեկն սուլթանին Կ. Պոլսում և կը
մատուցանեն նրան թանգազին ընծաներ կայս-
րի կողմից:

—Տօսկանեան պրինցուհի Լուիզա, որ ինչ-
պէս հաղորդեց հեռագրեր, թողեց «La Me-
tairie» ուսնատօրիս և գտնվում է այժմ Լին-
դաու քաղաքում, Գոնտամայի լէճ բաւարական
ափի վրա՝ հաշտվեց իր մօր հետ: Հաշտու-
թեան պայմանը կայանում է նրանում, որ նա
խօսք տուեց իր մօրը կտրել բոլորովին իր
յարաբերութիւնները Ժիւրնի հետ: Ասում են
մինչև անգամ, որ բաւարական և աւստրիական
ոստիկանութիւնները հրահանգ ստացան՝ թոյլ
չը տալ Ժիւրնին մտնել Բաւարիա, եթէ նա
ցանկանայ այդ անել:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ

25 փետրվարի

ՎԻԷՆՆԱ Աշուր (Հիւսիսային Բօհէմիա)
ստորերկրեայ գործը հարուածից յետոյ օրվայ
ընթացքում մինչև կէս գիշերը զգացվեցին
երկրի չորս թեթեւ ցնցումներ, Գրաւիցում,
նոյն տեղում, մի քանի թեթեւ ցնցումներ:
Արտասանամտում տարածված լուրերը, իբր թէ
Գրաւիցում ձեղքվածքներ են առաջացել տե-
հինն են:

ՄԱԴՐԻԴ Պաշտօնական տեղեկութիւններին
նայելով՝ գլխաւոր խորհրդի ընտրութիւնների
ժամանակ ընտրված են 311 մինիստրութեան
կազմակերպներ, 129 ազատամիտներ, 20 զե-
մօկարաններ, 10 կարլիստներ, 10 բէգիստա-
լիստներ և 11 անկախներ: Պալատի փակման
հրահանգները կատարարվի մարտի 20-ին:

ՄՕՍԿՎԱ Պիւղատնտեսական արդիւնաբե-
րութեան կարիքներին վերաբերեալ նահան-
գական յանձնաժողովը չը համաձայնեցաւ ազ-
նուականների և գիւղական բանկերի միացվե-
լուն իբրեւ Խոջային բանկ: Մանկութիւն
չյայտնված, որ գաւառական գեմաւօմների ներ-
կայացուցիչները ներկայ լինեն՝ երբ այս բան-
կերը գնահատում են հողերը, որ կազմվի ա-
ռանձին ֆօնդ՝ մանր փոխառութիւններին
համար, որ բարեօրոգիստելու համար փոխա-
տուութիւնների կարգը հեշտացնի և փո-
խատուութեան գումարը մեծացնի, որ ընդար-
ձակվի առօր-մութահանքի վարկը և վերա-
կանգնվի նրա նախկին կարգը: Յանձնաժողովը
անհրաժեշտ է հասարակ պետական ընդարձակ
կրէդիտ՝ խոտ սեփականելու համար և փոխա-
տուութիւնների կանոնները տարածել տանիք-
ների թիֆլիզի վրա:

ԼՈՆԴՈՆ Մովսէս տեսչութեան նախապատ-
րապական նախաճաշում նախատեսվում է
ծախս 35,838,841 ֆունտ ստէրլինգի, գլխա-
ւորապէս շինութիւնների, նորոգութիւնների և
նաւերի պահպանութեան վրա: Ենթադրվում է
չինիլ երեք պատերազմական նաւ, 4 յածանաւ
առաջին, կարգի, 3 զորահաւորված յածանաւ,
4 հետախուզիչ նաւ, 15 հակա-ակնակիր-
ներ և 10 սողորդեայ մակոյկներ: Օֆիցերների
թիւը սահմանված է 127,000 (?) հոգի, որով
կազմը աւելանում է 4,600 հոգով: Անցեալ
տարւոյ համախառնութեամբ ծախսն աւելանում
է 3,202,000 ֆ. ստերլինգով:

Կ. ՊՈԼԻՍ Բաղդադի երկաթուղու Ղոնիա-
Էրէզի միջին ճիւղի վրայ մօտ օրերս կը
սկսվի Ինժեներները ուղարկվեցին Ղոնիա:

ՍՕՅԵԱ Ձինուերական մինիստր Պապիկով
հրաժարական տուեց, որովհետև մինիստրների
խորհուրդը մերժեց վարկ բանալ ապառաղի-
նութեան համար:

ԼՈՆԴՈՆ Պատգամաւորների ժողովը Բոուլս
հարցնում է, աղբեօք կառավարութիւնը հա-
ղորդակցի՞լ է ռուս և պարսկական կառավա-
րութիւնների հետ՝ վերջնական համաձայնու-
թիւն կազմելու համար Ռուսաստանի և Անգ-
լիայի մէջ՝ Պարսկաստանում նրանց վարկելու
եղանակի և երկուստեք աղբեղութեան վերա-
բերմամբ: Կրանքօրն պատասխանեց, թէ Ռու-
սաստանի և Անգլիայի բարեկամական հա-
մաձայնութեան գալը նրանց երկուստեք չա-
հերի վերաբերմամբ Պարսկաստանում և ուրիշ
երկրներում՝ շատ ցանկալի է, և այս չաներին
վերաբերեալ հարցերը մօտ ժամանակներս եր-
կու կառավարութիւնների ըննութեան առար-
կաներն են:

ԱԹԷՆԻ Պատգամաւորների ժողովում ար-
տաքին գործերի մինիստրը մակեդոնական
հարցի մասին բացատրեց, թէ վերջին կիսա-
մեակում ամենատեսակ միջոցներով աշխատում
էին յուզված գրութեան մէջ պահել Մակեդո-
նիան: Այս ջանքերը նպատակին հասան,
ձեռք առնվեցին, միջոցներ միայն մի ազգա-
յնութեան օգտին: Սակայն պետութիւնները

համաձայնեցան որ անտեղ բարեփոխ անա-
տարակ քրիստոնեաների վիճակը Բ. Դուռը բն-
դրենք ընթացիկ ծրագրերը, որ առաջարկ-
վեց Եւրոպայի կողմից, և ըստ երևույթին այս
ընթացիկները, բարեփոխութեամբ գործադրվելու
դէպքում, բարեկարգ կառավարութիւն կըն-
ծային Թիւրքիայի առաջատար քրիստո-
նեաներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Փետրվարի 24-ին Մարիի-սկի
թատրոնում բարեգործական ներկայացումը
այցելեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայս-
րուհին Մարիա Ֆեօդորովնա և Ալեքսանդրա
Ֆեօդորովնա, Թագաւորանոջ Մեծ Իշխանը,
Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանուհիները:

Փետրվարի 24-ին Վերքիլովի յօդուհանական
կոնցերտը Ազնուականների ժողովարանի դահ-
լիճում այցելեցին Թագուհի Կայսրուհիներ Մա-
րիա Ֆեօդորովնա և Ալեքսանդրա Ֆեօդորովնա
և Թագաւորանոջ Մեծ Իշխանը:

26 փետրվարի
ՏՕՄԿ. Բացվեց Արևմտեան Սիբիրի իշխա-
նորդների համաժողովը:

ՍՕՅԻԱ. Երկրագործութեան միջնորդութեան
կից յատուկ մասնաժողովը որոշեց շինել Պե-
տերբուրգում 1904 թուին կայանալիք սլա-
ւոնական ցուցահանդէսում առանձին պաւի-
լիօն, բոլորարական էկսպոզիցիաները ցուցադրե-
լու համար: Ծախսերի համար պահանջված է
800,000 ֆրանկի վարկ:

ՊԱՐԻԶ. «Հաւասար գործակալութիւնը» տե-
ղելութիւն է ստացել, թէ այստեղի առաւօ-
տեան լրագրի հաղորդած լուրը իրր թէ հա-
մաձայնութիւն է կայացել Ֆրանսիայի, Անգ-
լիայի և Սպանիայի մէջ Մարտիկի գործերի
վերաբերմամբ՝ ոչ մի հիմք չունի Նոյնպէս
հաղորդվում է, թէ այսօր բաժանված է երկ-
րորդ «Էիզին Դիրը» մակագումական գործերի
մասին, որ վերաբերում է նոյնպէս Շանխայից
գործը դուրս հանելուն:

ՀՌՈՄ. «Ստեֆանի գործակալութեան» հա-
ղորդում է: Լոնդոնից, թէ Անգլիայի և Պոր-
տուգալիայի մէջ ծագած վիճելի հարցի լու-
ծումը՝ նրանց հարաւափրկական կալուածնե-
րի սահմանները որոշելու նկատմամբ՝ յանձն-
ված է իտալական թագաւորին՝ իբրև միջնորդ
դատարանի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրատարակված է Թագուհի
Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնայի հրովարտա-
կը սենատոր Ի. Ի. Գեղեկմանով անունով Կար-
միր Խաչի զլխաւոր կառավարութեան անդա-
մակցութիւնից դուրս գալու առիթով:

НОВАЯ КНИГА
СОВРЕМЕННЫЕ АРМЯНСКІЕ
ПОЭТЫ

Ов. Ованнисянъ, Ов. Туманянъ, Ал. Па-
турьянъ, Лев. Мануэлянь, Ав. Исаакянъ, въ
переводѣхъ, К. Бальмонтъ, Ив. Бунинъ, Г.
Галина, Н. Климовой, Ап. Коринфскаго, Л.
Уманца и др. Подъ редакціей Льва Уманца и
Аракела Дервишъ.

Цѣна 1 руб.
Продается въ Т и ф л и с ъ, въ Цен-
ральномъ книжномъ магазинѣ.

М о с к в а, складъ изданія въ книжномъ
магазинѣ „Трудъ“, Тверская улица.

3—5

Վ Ե Ն Ե Մ Ի Կ Ի ց ս տ ա ճ Վ Ե ց
Հ. Ղ. ԱԼԵՔԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԶՈՒԻՐՎԱԾ
«ԶԻՆՏՄՈՒՆԻՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Խմբ. Գր. Բալասանի
Դիմն է 40 կոպ.

Գլխաւոր պահեստը միմիայն «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ»
գրախանութեամբ,

5—5

Հոյս տեսաւ
Մ. Վ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻ

ИСТОРИЯ ПЕРЕВОДА БИБЛИИ
НА АРМЯНСКИЙ ЯЗЫКЪ

С. Петербургъ, 1902. Цѣна, 3 руб.

Վաճառվում է Թիֆլիսում Կենտրոնական և
Գուտտենբերգ գրալուծարաններում և էջ-
միածնում՝ հեղինակի մօտ:

3—5

Ա Տ Ա Մ Ե Ա Ր Ո Յ Տ
Ա. Մ. Խան-Աղեան

Ընդունում է հիւանդներին 9—2 և 4—6
ժ. Երևանեան հրապարակ, առան Խարազեանի
№ 3:

40—100

Ա Տ Ա Մ Ե Ա Ր Ո Յ Տ
ՕՐ. Ս. ՇԵՐՄԱՆՈՎՆԵՐՆ

Շարժանկրւմ է հիւանդների ընդունելութիւնը:
Առաւօտեան ժամը 9—2

Երեկոյեան ժամը 5—7
(հ. Կ.) 48—105

Քուրաչիսի Միքայիլեան Ազնուականների Հողային
Բանկի Վարչութիւնը

Արանով յայտարարում է, որ նրանք, որոնք ցանկութիւն ունեն գրաւ դնել իրանց Թիֆլիսում
և Թիֆլիսի նահանգում գտնվող անշարժ կապերը վերադնելու Բանկում, պատիւ անեն դիմելու
յիշեալ Բանկի Վարչութիւնից նշանակված ազնու Ն. Ս. Գուգուշիլիին հետեւեալ հասցեով.
Թիֆլիս, Տերկոյիլայա փողոց, № 22:

1—8

Վարչութեան նախագահ՝ Վ. ՄԵՆԵԿՈՎ

Կարսի Հայոց Հոգեւոր Կառավարութեան Առեւ-
անում

Էրկրորդ անգամ նշանակված է առաջիկայ մարտի 3-ին, ցերեկվայ ժամը 12-ին
Ա Տ Ո Ւ Ր Գ և 5-ին Կ Կ Ն Ա Տ Ո Ւ Ր Գ կապալով տալու Ղօշավանքի
«Տայլար» անունով 600 դեսեմտին հոդերը, որին մասնակցել ցանկացողները պայմանների
մասին դիմելու են նոյն նոտանին:

2—10

Անդամ կառավարութեան՝ Խորէն քահանայ Ստամբուլեան

«Օ Գ Տ Վ Ե Յ Է Բ Գ Է Պ Բ Ի Յ»
Ե Ղ Բ. Վ. Ե Ի Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

որը գտնվում է Գուգուշիլի պրոսպեկտի վրա, I գիմնադրայի հանդէպ,
Ն Շ Ա Ն Ա Կ Վ Ա Մ Է

ՄԻՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ԶԱՐԱԹՈՎ

այն է փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ը
2Ը ՏԵՄԵՐՎԱԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Անցեալ տարվայ առաւելին և ձմեռվայ սեզօններից մնացած տղամարդկանց, կանանց և
երեխայոց հագուստների, որոնք առանձնացրած են միւսաներից և վերջնական դնելը նշանակ-
ված էտիկետների վրա կապույտ մատիտով:

Ստացել ենք արտադրամասեան և ռուսական ամենայայտնի գործարաններից, մեծ քանա-
կութեամբ շահագործող տեսակ տրիկոտեր և մանուշեքներ:

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ, ծախում ենք նաև արշինով:
Ստացել ենք և շարունակ ստանում ենք եւրոպական ամենավերջին տարազով կարված
տղամարդկանց և կանանց հագուստներ և վերնազգեստներ:

Դիմելու արժանութեան կողմից չունի ոչ մի մրցող:
5—10

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“

ԿՕՆՁԵՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած աղբիւրները աբժանացան—
Կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱՐ-ԼՈՅՈՒՈՒՄ, Կարաւէլ «ԻԻԻԼԵՆԱՅԱ» եւ առհաս-
տակ բարձր յատկութեան կարամէրներ մրցեղէնով:

Գործարանում այստեղում են մայրաքաղաքի նշանաւոր մարդկանց:
Գտնուէրներով դիմել. Թիֆլիս, Գալլուպիլայա փողոց, սեփական առան
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութիւնը № 772:

97—100

Խմբագիր՝ ԱԼԵՔԱՆԻ ԲԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԿՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՍԶԱՅ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԻՒԱՆՈՅ

Բ. ՆԱԻՍՏԱՐԴԵՆԻ

(Գուկիս, Վորոնցովի արձանի հանդէպ)

Ա մ ե ց օ ր ք ա ց ի կ ի ր ա կ ի օ ր Ե ր ի ց
Ա Ր Ա Ռ Օ Ն Ե Բ Ը

Բ. Ա. ՆԱՍՏԱՐԴԵՆԻ—11—12 ժ. վերաբերման,
վերնական (սիֆիլիս) և միզապատ. հիւանդ.

ԳԻՊՎԱՆ—9—10 ժ. ալերգի, Ներքին և ներքալին:
Մ. Գ. ԱՆԵՏԻՍԵԱՆ—10—11 ժ. մարթու, վերնա-
կան և վերաբերման:

Զ. Բ. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. մանկաբարձու-
թեան կանանց և երեխայոց:

Վ. Բ. ԳԱՆԵԼԻ—12—1 ժ. ալանջի, զթի և կո-
կորդի:

Դ. Ա. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—1—1/2 ժ. ներքին և երե-
խայոց հ. երկուց. չորեք. արքաթի:

Ա. Գ. ԳԱՐԱՆԱՍԵԱՆ—1—1/2 ժ. ներքին և երե-
խայոց հ. երեք. հինգ. չարաթի:

Ե Բ Ե Վ Ռ Ն Ե Բ Ը

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԻՆՈՎ—5—6 ժ. վերաբերմ. և մարթու
հ. (կիւկարաբուս):

Ն. Ս. ԼԻԻԲԱՅԻ—6—7 ժ. ներքալին (կիւկարա-
բուս) ներքին և վերնական:

ԳՈՒՐԱՅԵՆ ԵՅԵՐԱԿԻՆ—7—7/2 ժ. մանկաբարձու-
թեան և կանանց:

Դ. Ա. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—7/2—8 ժ.

Բ. Ա. ՆԱՍՏԱՐԴԵՆԻ—7/2—8 ժ.

Վաւրը 50 կ. չքաւորները ձրի համախորհրդի
(կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Յ. ԱԼԵՔԱՆԻ—առանք. ծաղկահատ և բժշկա-
կան մարմնամարզ. գիմն. 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲՈՒԹԵԱՆ Ա. ՄԻՍԻԹԱՐԵԱՆՅՅ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-
թու և վերնական ախտ ունեցող հիւանդ-
ներին Գիմնիկ-միկրոակոպիական կաբինէտ, որ-
անց ընդունվում են կաթի, խորխի, մէղի և
արեան անալիզները:

Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.

Բերուսովոյայա փողոց № 41. առան Արա-
բաւեանի Եզդուտսկայա շ. № 41. Домъ А-
раповъ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ
ԵՒ ԲԱՅԵՐԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ ԶԱՄՐ
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԵՐԳԵԻ (RAND-PRIX)
Պարկի ցուցահանդէսում ստիւժ է Ռուսաստանից ՄԻՄԻԱՅՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ս. ՆԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
որ հիմնված է 1860 թվականին
Խմբում են Բ Ե Տ Ի Ն Ի Կ Ր Կ Ն Ա Կ Օ Շ Ի Կ Ն Ե Ր գնելիս ուշադրութիւն դարձնել կրտսկների հետեւեալ կնիքի վրա
1860
T.P.A.P.M.
С.ПЕТЕРБУРГЪ.
Դանաւանց ընկերութեան հիմնարկութեան «1860» թվականի եւ «Ս. ՆԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարգի եւան-
կիւնու մէջ (գործարանի կնիքը):
Մ Ե Շ Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ե Ա Ն Ս Կ Ա Տ Ա Ր Ա Ի Տ Է
«Լ Է Օ Պ Օ Լ Դ Ն Է Յ Շ Է Լ Է Բ» առեւտրական տունը
Ս. Պետերբուրգում, Մոսկովում,
Բրիւսովում, Յոլդայում,
ՐՕՍՏՈՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐՈ
Եկաւերբուրգում, ըկաւալում
եւ Խարկովում: